ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԿԱՐԾԻՔԸ

Դիտորդ մարմնի կազմը՝

Գեղամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ազնեսա ԽԱՄՈՅԱՆ
Հայկուհի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Օլգա ՍԱՖԱՐՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Shamshyan.com կայքում հրապարակված՝ «Ապարանի ոստիկանները հայտնաբերեցին 20-ամյա հարսին, ում գյուղացիները կարծում էին, թե արջն է տարել. ՖՈՏՈՌԵՊՈՐՏԱԺ, ՏԵՍԱՆՅՈՒԹ» վերտառությամբ լուրի վերաբերյալ

Դիտորդ մարմնին է դիմել քաղաքացի Գեւորգ Հայրապետյանը՝ ընդդեմ Shamshyan.com կայքի՝ 2016թ. սեպտեմբերի 29-ի **«Ապարանի ոստիկանները հայտնաբերեցին 20-ամյա հարսին, ում գյուղացիները կարծում էին, թե արջն է տարել. ՖՈՏՈՌԵՊՈՐՏԱԺ, ՏԵՍԱՆՅՈՒԹ»** վերտառությամբ լուրի:

Քանի որ հրապարակումը վերաբերում է կոնկրետ անձի, որը չի դիմել Դիտորդ մարմնին եւ որեւէ մեկին չի լիազորել այդ անել, Դիտորդ մարմինը բավարարվում է միայն հրապարակման վերաբերյալ կարծիք հայտնելով՝ հիմնվելով իր աշխատակարգի 5.1 հոդված վրա:

Ա) ՓԱՍՏԵՐ

1. 2016թ. սեպտեմբերի 29-ին Shamshyan.com կայքում հրապարակվել է «Ապարանի ոստիկանները հայտնաբերեցին 20-ամյա հարսին, ում գյուղացիները կարծում էին, թե արջն է տարել. ՖՈՏՈՌԵՊՈՐՏԱԺ, ՏԵՍԱՆՅՈՒԹ» վերտառությամբ լուր: Այն ներկայացնում է, որ ոստիկանության Ապարանի բաժնի աշխատակիցները Երևանում հայտնաբերել են Հայաստանի մարզերից մեկի բնակչուհի 20-ամյա Հ. Ե.–ին (նյութում հերոսուհու անվան սկզբնատառերը, ինչպես նաև՝ բնակության վայրը ներկայացված են ամբողջությամբ), որը հեռացել էր տնից, իսկ գյուղացիները նախօրեին կասկածներ էին հայտնել, թե «նրան արջն է տարել»:

2. Նյութին կից ներկայացվում է երիտասարդ կնոջ այն նամակի լուսապատճենը, որը նա թողել էր տնից հեռանալուց առաջ:

Նամակը պարունակում է անձնական կյանքի տվյալներ, ներկայացնում է քաղաքացու վիճակը, խնդիրների առկայությունը, միաժամանակ անդրադարձ կա քաղաքացու երեխային:

Բ) ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

1. «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, հոդված 7. ***«Լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի սահմանափակումները».***

«2. Արգելվում է տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության տարածումը, եթե դա ստացվել է տեսաձայնագրման կատարման մասին առանց անձին զգուշացնելու, եւ այդ անձն ակնկալել է, որ գտնվում է տեսաձայնագրումը կատարողի տեսադաշտից դուրս, լսելի չէ նրա համար եւ դրա համար ձեռնարկել է բավարար միջոցներ, բացառությամբ, երբ տեսաձայնագրումը կատարած անձի տեսադաշտից դուրս լինելու կամ նրա համար լսելի չլինելու համար ձեռնարկված միջոցներն ակնհայտորեն անբավարար են եղել:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված, ինչպես նաեւ մարդու անձնական եւ ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկատվության տարածումը թույլատրվում է, եթե դա անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար»:

2. Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր, սկզբունք 4. ***Հարգանք մարդկանց անձնական կյանքի եւ այլ իրավունքների նկատմամբ.***

«Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

4.1. պաշտպանել մարդկանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, ներառյալ՝ հարգանքն անձնական եւ ընտանեկան կյանքի, բնակարանի, սեփականության, առողջության եւ նամակագրության նկատմամբ: Բացառապես հասարակական շահի առկայությամբ կամ պաշտպանության անհրաժեշտությամբ կարող է արդարացվել բարձրաստիճան պաշտոնատար անձանց, հասարակական գործիչների, իշխանության կամ հասարակական ուշադրության ձգտող մարդկանց անձնական կյանքին վերաբերող տեղեկությունների հրապարակումը,

4.2. այն դեպքում, երբ խոսքի ազատությունը հակասության մեջ է մտնում մարդու մյուս հիմնարար իրավունքների հետ, լրատվամիջոցն ինքնուրույն է վճռում, թե ինչին տալ նախապատվությունը եւ պատասխանատվություն է կրում իր վճռի համար»:

Գ) ԿԱՐԾԻՔ

1. Քանի որ հոդվածում հիշատակված անձը հանրային կամ հանրաճանաչ անձ չէ, ուստի Դիտորդ մարմինը համարում է, որ նրա անձը նույնականացնող տվյալների (անուն, ազգանուն, բնակության վայր եւ այլն), ինչպես նաեւ հոդվածին կից նամակի լուսապատճենի հրապարակումը որեւէ հանրային շահ չէր հետապնդում, եւ մարդու անձնական կյանքի նկատմամբ հանրային հետաքրքրասիրություն առաջացնելը որեւէ կերպ չի արդարացվել:

2. Այդ հրապարակումը հակասում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի 4.1 կետին, այսինքն՝ հրապարակմամբ խախտվել է մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

3. Դիտորդ մարմնին մտահոգում է այն, որ սա առաջին դեպքը չէ, երբ ըստ էության քննչական եւ հետաքննչական մարմինների օպերատիվ տեղեկություն հանդիսացող նյութերը հայտնվում են լրատվամիջոցներում:

4. Դիտորդ մարմինը հորդորում է Shamshyan.com կայքի ղեկավարությանը՝ հեռացնել կնոջ անձը նույնականացնող տվյալները ու անձնական նամակի լուսապատճենը նյութից եւ այսուհետեւ նման թեմաներ լուսաբանելիս ավելի նրբանկատ լինել, առաջնորդվել ՀՀ օրենսդրությամբ եւ համընդհանուր ընդունելի էթիկական սկզբունքներով:

5. Դիտորդ մարմինը կոչ է անում՝ չբավարարվել միայն բովանդակությունը հեռացնելով, այլ նաեւ ընթերցողներին հասկանալի ձեւով բացատրել, թե ինչու էին իրենք հրապարակել խնդրահարույց տեղեկություններն ու լուսապատճենը եւ ինչու են հետո այն հեռացրել:

6. Դիտորդ մարմինը կարծում է, որ Հայաստանյան էլեկտրոնային ԶԼՄ-ներում էթիկական կանոններին հակասող նյութերի տեղադրումն ու որոշ ժամանակ անց, ԴՄ առաջարկով կամ այլ պատճառներով դրանց հեռացնելը, ԴՄ այս եւ նախկինում ընդունած եզրակացություններից եւ կարծիքներից բխող բավարար հետեւություն չէ. լրատվամիջոցներն ու լրագրողները պետք է խուսափեն մարդկանց անձնական կյանքի միջամտություն պարունակող նյութերի տարածումից, բացառությամբ՝ երբ կա ակնհայտ հանրային շահ:

Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի 2016թ. հոկտեմբերի 14-ի՝ Գորիսում կայացած արտագնա նիստում,

Դիտորդ մարմնի հետեւյալ կազմով.

Գեղամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, «Անալիտիկոն» հանդեսի գլխավոր խմբագիր
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ, իրավաբան
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ, «A1+» հեռուստաընկերության տնօրեն
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 43-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: